

**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

1. Գործառույթը՝ Ավտոմոբիլային ճանապարհը հաղորդակցուղիով հատման, օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում դրա տեղադրման համաձայնեցում: Պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցված սպասարկման օբյեկտներ տեղադրելու համար ճանապարհի նկատմամբ օբյեկտի տեղադրման համաձայնեցում: Փոստային կապի ազգային օպերատորին գործող (կամ կառուցվող) բնակելի կամ այլ շենքերում ոչ բնակելի տարածքների տրամադրում: Ճանապարհների վրա գովազդ տեղադրելու համաձայնեցում:
2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ <<Տրանսպորտի մասին>> ՀՀ օրենք, <<Ավտոմոբիլային ճանապարհների մասին>> ՀՀ օրենք, <<Գովազդի մասին>> ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1025-Ն որոշում, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2404-Ն որոշում, ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 765-ն որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Ավտոմոբիլային ճանապարհը հաղորդակցուղիով հատման, օտարման շերտում և (կամ) պաշտպանական գոտում դրա տեղադրման համաձայնեցման կատարման համապատասխանությունը ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N 1025-Ն որոշման պահանջներին: Համապատասխան փաստաթղթերի առկայությունը:	Պահպանված է					
2. Պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցված սպասարկման օբյեկտներ	Պահպանված է					

<p>տեղադրելու համար ճանապարհի նկատմամբ օբյեկտի տեղադրման համաձայնեցման կատարման համապատասխանությունը &lt;&lt;Ավտոմոբիլային ճանապարհների մասին&gt;&gt; ՀՀ օրենքի պահանջներին: Համապատասխան փաստաթղթերի առկայությունը:</p>						
<p>3. Համայնքում փոստի առկայությունը և այն համապատասխան տարածքով ապահոված լինելը համաձայն &lt;&lt;Փոստային կապի մասին&gt;&gt; ՀՀ օրենքի:</p>	Պահպանված է					
<p>4. Համայնքի տարածքում գովազդի տեղադրման թույլտվության վերաբերյալ ավագանու որոշումների առկայությունը: Տեղադրված գովազդների համապատասխանությունը &lt;&lt;Գովազդի մասին&gt;&gt; ՀՀ օրենքին և ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 765-ն որոշմանը:</p>	Պահպանված է					

3. Գործառույթը՝ Կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման անվտանգության կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը, շահագործումն ու շինարարությունը: Կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը: Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման թույլատրում:

4. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենք, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 112-Ն որոշում, ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1025-Ն որոշում, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2404-Ն որոշում, ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16- N762 որոշում և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1419-Ն որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Համայնքային ենթակայության ճանապարհների առկա վիճակը, դրանց պահպանման և շահագործման ուղղությամբ համայնքի ավագանու որոշումների առկայությունը, դրանք ճանապարհային նշաններով կահավորման տարատեղման սխեմաների առկայությունը և առկա նշանների, սխեմաների համապատասխանումը՝ ՀՀ օրենսդրությանը:	Պահպանված է					
2. Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքների բարելավման ուղղությամբ ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումներ և կատարված ուսումնասիրությունների առկայությունը:	Պահպանված է					